

18 Քաղեալ Հարցն անդ զՕկարգ Աննոնի
 Չեռնադրութեան Հայրապետի
 զԱբրահամըն ըստ մեր ծիսի
 Օծեն իւղով յոյժ քաղցրաշար :

19 Ապա ի քսան հինգերորդի
 Աւուր ամսոյն Նոյեմբերի
 Այն է ըզկնի աւուր մենի
 Չեռնադրութեան վեհին պայծառ :

20 Յաւագ խորան էջմիածնի
 Չեռամբ նորին Հայրապետի
 Եպիսկոպոս օծեալ օրհնի
 Մեծ Կեսարու Սարգիս կայտառ :

21 Որ կոչեցաւ իսկ Շնորհալի
 Բուն բերանով նոյն նոր վեհի
 Ի լուր համայն մանկանց ուխտի
 Ի ժամ օծման յայն սուրբ տաճար :

22 Այս ողջ գրբեալ կայ համարձակ,
 Ի վճիայական կոչեալ նամակ,
 Ջոր Հայրապետք տան ի դաստակ
 Վերատեսչաց առ հասարակ :

23 Եւ զայս կոնդակ գեղեցկածիր
 Քառակընիք եւ մեծագիր
 Պահեմ առ իս իբր ազնիւ իր
 Ի յիշատակ հօր իմ ընտիր :

24 Բայց արդ Սարգիս մեր Սառաֆեան
 Արհի տեսուչ Կապպադովկեան
 Յետ օրհնութեան եւ սուրբ օծման
 Եկաց անդ եւս ի ձմեռն յայն :